

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻ

## ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

Միաբանական Ընդհ. Ժողովը Մարտ 10ի Ուրբաթ օր կեսօրը վերջ ժամը 2ին է նիստ գումարուեցաւ Պատրիարքարանի դահլիճին մէջ, նախապահութեամբ Պատրիարք Մրբազան Հօր, եւ Լուսարարապետ ընտրեց Գեորգ. Տ. Հայրիկ Նպգ. Ասլանեանը՝ Պատրիարքական Փոխանորդը Ս. Արքուշ:

Նորընտիր Լուսարարապետը ծնած է 1909 ին՝ Վասպուրական աշխարհի Աղբակ գաւառի Ներնգանի գիւղը, որոյ գիւղապետն է Սարգիս Կարապետ Կարապետեանը: Սարգիս Կարապետեանը ծնած է մեծանուն Պատրիարք Լուսահոգի Դուրեան Մրբազանէն, վարդապետ՝ յաւեհան Թորոյմ Պատրիարքէն՝ 1932 ին, իսկ եպիսկոպոս՝ Նորին Ս. Օմարիւն Տ. Տ. Վաղգէն Կաթողիկոսէն՝ 1955 Նոյս. 6ին:

Շուրջ երեսուն տարիներ է ի վեր նորընտիր Լուսարարապետի գործունէութիւնը սահմանափակուած է Ս. Արքուշէն ներս: Վարած է տարիներով Աւագ Թարգմանի պաշտօնը, ինչպէս նաեւ Տպարանի եւ Կալուածոց Տեսչութեանց կարեւոր պաշտօնները: Նշան է Բանիցա Տնօրէն Ժողովոյ տնօրէն եւ Ասեմապետ Միաբանական Ընդհ. Ժողովին, Ժամանակ մը նաեւ Ուսուցիչ Ժառ. Վարժարանի:

Նկարագրով անբեք եւ վառքի ընդհանուր շաներու տեսակեով նախանձաբոյզ անձնաւորութիւն մըն է նորընտիր Լուսարարապետը: Վառքի իշխանութեան եւ կարգութեան դէմ յարուցուած երկու խռով պայքարներուն մէջ, զիսակոր դերակատարներէն մին հանդիսացաւ, արդիւր ըլլալով օ-

րինական բախտակցիւրներուն, որոնք վերի վայր շրջել կ'ուզէին կանոնն ու կարգը այս նուիրական Հաստատութենէն ներս:

Վերջին տարի իրագործութիւններու ընթացքին, բռնագրաւիչներու ոգիին եւ գործադրած միջոցներուն հակառակած ըլլալուն պատճառաւ, ամենէն ծանր խռովութիւններուն երթարկուեցաւ, սակայն նշանախեց մը տնկալ չեղեցաւ իր արդար նկատած տեսակէտներէն եւ միեւն զերջ մնաց պատկերները վրայ:

Լուսարարապետութիւնը Ս. Ուսիսի Միաբանութեան մէջ Պատրիարքութենէն յետոյ, կարեւորագոյն եւ ցկեան պաշտօնն է: Իբրեւ ներքին Տեսուչ, իր պաշտօնն է տնտեսական կերպով հսկել տեղեւոր մէջ կարգապահութեան եւ պաշտամունքի անբեքի եւ վայելուչ կատարման, ինչպէս նաեւ Ս. Արքուշի հովանիին ներքեւ եղող բոլոր եկեղեցիներու անօրէններուն, զարգեւորն, զոյգեւորն անկորուստ եւ տնկալ պահպանման:

Ս. Բազմեանց զինուորեալ Միաբանութիւնը, իրեն վստահելով Լուսարարապետութեան պաշտօնը, գործակալութեան արտադրած եղաւ իր տերն ու յարգանքը ինչպէս նաեւ զնահասանքը Ս. Արքուշի երեսնամեայ իր ծառայութեան համար, այն մեծ վստահութեամբ՝ որ Նորին Գեորգիսեանութիւնը պիտի ընէ իր լաւագոյնը, արժանավայել կերպով վարելու համար պատասխանատու այս պաշտօնը, այն ոգիով ու գերով որ իր եղած է:

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ս. Արքուշ շնորհակալութեամբ տալով է Հաստատութեան բարեփառութեան բարեբար Գալուստ Կիլիկեցիէանի հաստատած Հիմնարկութենէն հետեւեալ նուիրատուութիւնները, 1960 ի Դեկտեմբեր ամսուն.

1. — Գաղթականաց եւ չխաւորաց Տ. Տ. հոգատարութեան 2000
2. — Ժառանգաւորաց Վարժարանին 3000

3. — Թարգմանչաց եւ Հերոման 3000  
Վարժարաններուն 1000
4. — Տպարանին 1000

Միեւնոյն թուականին բարեբար Հիմնարկութիւնը իրեց 250 Սթրիլին իբրեւ Ժամուր Բաժնուելու համար Միաբանութեան տնտեսականութիւն, Թարգմանչաց տնտեսական օրը Նուրապի մը բոլոր Մրբազաններուն մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին առթիւ,

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՎԵՀԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Յունուարի 30ին, երկուշաբթի օր, ժամը կեսօրուան երկուրին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը այցելութիւն մը տուաւ Վենափառ Թագաւորին, Ամման, Պամմանի պալատին մէջ:

ազգայիններէն Պր. Հայկ Փէրքեան, Յակոբ Պեքեվեան, Տիւրան Ոսկերիչեան եւ Վարուժան Էրեքմեզեան: Պատրիարք Սրբազանն ու իր հետեւորդները ընդունուեցան Արքայական Դրաններէն մէջ, որոնում՝ ժամուկ: Ն.



Պատրիարք Ս. Հայրը Նորին Վենափառութեան հետ:

Նորին Ամենապատուութեան կ'ընկերաւուային Պատրիարքարանի Իււանապետ Հոգե. Տ. Շահէ Վրդ., Ամմանի Հոգեւոր Հովիւ Հոգե. Տ. Դաւիթ Վրդ., Երուսաղէմի ազգայիններէն Պր. Մարտիրոս Մարոնեան, Ամմանի

Ամենապատուութիւնը ճախ խօսք առաւ եւ շնորհաւորեց Հիւսէյն Թագաւորը Արքայական Զարթոնքի տօնին առիթով: Սոյն տօնը հաստատուած է Հաւիթական տան մեծամուն ճաւաղներէն՝ Հիւսէյն Ամիրապետին կողմէ, որ

մեծամուն բաւարարին եւ կիւլպեկեան կերպասանի ննջեցելոյ հողիներուն համար, ըստ Ս. Արքայի մէջ տարիներէ ի վեր հաստատուած սովորութեան:

Ներկայ տարւոյ Փետրուարին, նոյնպէս շնորհակալութեամբ տալանք 4000 Սթերլին, յաշկացուելու համար նոյն նպատակներուն:

Նաեւ՝ 250 Սթերլին, իբրեւ ժամուկ բաժնուելու համար Միաբանութեան անդամներուն, Ս. Սարգսի տօնին օրը կատարուած հողեհանգստեան պաշտօնին առիթ, ի յիշա-

տակ մեծամուն բաւարարի հօր՝ Սարգիս Կիւլպեկեանի հողոյն:

Այս առիթ, Ն. Ամեն. Սրբազան Պատրիարքը եւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը կը յայտնեն իրենց երախտագիտութիւնը Դաւաւտ Կիւլպեկեան Հիմնադրութեան պատարժան Վարչութեան եւ Հայկական Բաժնի ոգնի Տնօրէնութեան, սպօքելով որ անոր լուստողի հիմնադրին յիշատակը անբաւարար մնայ Բրիտանական Ս. Սկեղեցիներէն եւ Պատրիարքարանէն ներս: